ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Գյումրի 09. 03. 2016 թ.

ԿԱՅԱՑԱԾ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-ԻՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝	Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝	Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝	Խ. ԽՆՁՐՑՅԱՆԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝	Տ. ՂԱՐԻԲՅԱՆԻ
	Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ
	Ա. ԱՆՏԻԿՅԱՆԻ
	Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

Հանձնաժողովի նիստին մասնակցել է <<Երդեվեք>>, <<Մանթաշի Հովիտ>> և <<Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների ներկայացուցիչները:

ՕՐԱԿԱՐԳ

1.2016 թվականի մարտի 11-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թվով 3 միկրոավտոբուսային երթուղիների սպասարկան համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթին մասնակցության հայտերի Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> պահանջներին փաթեթներում ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը որոշելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված Ախուրյան գյուղի, Նոր Ախուրյան 3բ/շ. 1-ին բն. բնակիչ (Ա/ծ) Հակոբ Կիրակոսյանի դիմումը՝ Գյումրի-Ախուրյան-Նոր Ախուրյան և հետադարձ /07-006/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման մեկ ուղևորի փոխադրման գնի փոփոխման մասին և <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը Գյումրի – Ազատան և հետադարձ /07-001/ ավտոբուսային երթուղին միկրոավտոբուսային երթուղով փոխարինելու մասին:

/Զեկ. Խ. Խնձրցյան/

ԼՍԵՑԻՆ - 1. 2016 թվականի մարտի 11-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի թվով 3 միկրոավտոբուսային երթուղիների սպասարկան համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթին մասնակցության հայտերի մասին:

2016 թվականի մարտի 11-ին կայանալիք մրցույթին մասնակցության հայտեր են ներկայացվել.

Գյումրի-Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկելու համար սահմանված ժամկետում մրցույթի մասնակցության հայտ է ներկայացրել <<Մանթաշի Հովիտ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղիները սպասարկելու համար սահմանված ժամկետում մրցույթի մասնակցության հայտեր է ներկայացրել <<Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկելու համար սահմանված ժամկետում մրցույթի մասնակցության հայտ է ներկայացրել <<Երդեվեք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

<<Երդեվեք>>, <<Մանթաշի Հովիտ>> և <<Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից 2016 թվականի մարտի 11-ին կայանալիք մրցույթին մասնակցության համար ներկայացված փաթեթներում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> պահանջներին:

Հանձնաժողովի նախագահ Ս. Պետրոսյանը առաջարկեց՝

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> պահանջներով հանձնարարել <<Երդեվեք>>, <<Մանթաշի Հովիտ>> և <<Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին Գյումրի-Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/, Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղիները սպասարկելու համար նախատեսված համապատասխան ավտոբուսները և միկրոավտոբուսները 2016 թվականի մարտի 11-ին ժամը 15 ^{00} Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի /ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կենտրոն/ հասցեում ներկայացնել հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը:

Առաջարկությունն ընդունվել է՝ միաձայն :

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

Քանի որ <<Երդեվեք>>, <<Մանթաշի Հովիտ>> և <<Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից 2016 թվականի մարտի 11-ին կայանալիք մրցույթին մասնակցության համար ներկայացված փաթեթներում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> պահանջներին հանձնարարել <<Երդեվեք>>, <<Մանթաշի Հովիտ>> և <<Լիլիթ Մարիամ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին Գյումրի-Սպանդարյան-Արևշատ-Մեծ Մանթաշ-Փոքր Մանթաշ և հետադարձ /N 07-044/, Գյումրի-Վարդաքար-Փանիկ-Մեղրաշեն-Գեղանիստ և հետադարձ /N 07-046/ և Գյումրի-Բենիամին-Լուսակերտ-Սարատակ-Հովտաշեն-Արթիկ և հետադարձ /N 07-047/ միկրոավտոբուսային երթուղիները սպասարկելու համար նախատեսված համապատասխան միկրոավտոբուսները 2016 թվականի փետրվարի 11-ին ժամը 15 ^{00} Գյումրի քաղաքի Շիրակացի փողոցի /ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կենտրոն/ հասցեում ներկայացնել հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի գնահատմանը:

ԼՍԵՑԻՆ - 2 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին հասցեագրված Ախուրյան գյուղի, Նոր Ախուրյան 3 բ/շ. 1-ին բն. բնակիչ (Ա/ձ) Հակոբ Կիրակոսյանի դիմումը՝ Գյումրի-Ախուրյան-Նոր Ախուրյան և հետադարձ /07-006/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման մեկ ուղևորի փոխադրման գնի փոփոխման մասին և <<Տրանս Ակնթարթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումը Գյումրի – Ազատան և հետադարձ /07-001/ ավտոբուսային երթուղին միկրոավտոբուսային երթուղով փոխարինելու մասին:

Հանձնաժողովի նախագահ Ս. Պետրոսյանը առաջարկեց՝

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի անցկացման կարգի>> պահանջներով, Գյումրի-Ախուրյան-Նոր Ախուրյան և հետադարձ /07-006/ միկրոավտոբուսային երթուղու սպասարկման մեկ ուղևորի փոխադրման գինը չփոխել, իսկ Գյումրի-Ազատան և հետադարձ /07-001/ ավտոբուսային երթուղին չփոխարինել միկրոավտոբուսային երթուղով:

Առաջարկությունն ընդունվել է՝ միաձայն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

Հանձնարարել անհատ ձեռներեց Հակոբ Գագիկի Կիրակոսյանին Գյումրի-Ախուրյան-Նոր Ախուրյան և հետադարձ /07-006/ միկրոավտոբուսային երթուղին սպասարկել մեկ ուղևորի փոխադրման նախկին գնով, իսկ Գյումրի-Ազատան և հետադարձ /07-001/ ավտոբուսային երթուղին չփոխարինել միկրոավտոբուսային երթուղով:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Ս. Պետրոսյան

նախագահի տեղակալ՝ Վ. Հարությունյան

անդամներ՝ Տ. Ղարիբյան

Ա. Մարգարյան

Ա. Անտոնյան

Ա. Մուրադյան

քարտուղար՝ Խ.Խնձրցյան